ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ
ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԶԱԲԵԼԼԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՆՐԱ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Հայ դպրոցի պատմության մեջ Տաթևի դպրոցը անհամեմատ մեծ դեր է խաղացել: Թեպետ այն միջնադարի առաջին բարձրագույն դպրոցը չէր, սակայն առաջինն էր, որ ունեցել է համալսարանական կառուցվածք, մասնագիտական ճյուղավորումներ ու ֆակուլտետներ: 13-րդ դարի վերջերին, թուրքերի և թաթարների ավերիչ ասպատակություններից հետո Տաթևը վերստին նորոգվեց ու ծաղկեց, իսկ 14-րդ դարի կեսերից մեծ անուն և հռչակ ձեռք բերեց, հատկապես այն ժամանակ, երբ նրա գլուխ նախ կանգնած էր Հովհան Որոտնեցին, այնուհետև՝ նրա տաղանդաշատ աշակերտ Գրիգոր Տաթևացին:

Բանալի բառեր՝ *միջնադարյան դպրոց, հոգևոր կենտրոն, գրչության կենտրոն, փիլիսոփայական ուսմունք, դասական գիտություններ, հոգևոր աստիճան, միջնադարյան Հայաստան, համալիր շինություններ, բարձրաստիճան հոգևորականներ:*

9-րդ դարի վերջերին Տաթևը դարձավ հոգևոր և մշակութային ամենախոշոր կենտրոններից մեկը Սյունյաց աշխարհում: Ըստ մեզ հասած արձանագրությունների ու վկայությունների Տաթևի մեծ եկեղեցին իր համալիր շինություններով կառուցվել է 895 թվականին: Մշակույթի, արվեստի և հատկապես դպրոցի և կրթության կազմակերպման և զարգացման գործում Տաթևը վիթխարի դեր է խաղացել. այն միջնադարյան Հայաստանի մեծահռչակ հոգևոր կենտրոններից մեկն էր, որը, բազմատեսակ առաջնություններով հանդերձ, առանձնանում էր նաև իր դպրոցների կարգադասությամբ ու տևականությամբ: Ըստ Սյունյաց պատմիչ ՍտեփանոսՕրբելյանի վկայության՝ Տաթևն իր ծաղկման առաջին շրջանում ուներ 500 քահանաներից և բարձրաստիճան հոգևորականներից կազմված հզոր միաբանություն, իսկ 35 տարի անց նրանց թիվն արդեն հասնում էր 1000-ի[1]:

Շուտով Տաթևի դպրոցը մեծ անուն է ձեռք բերում, նրա համբավը հասնում է երկրի բոլոր ծագերը, և ամեն կողմերից ուսումնատենչ պատանիներն այստեղ էին գալիս՝ ուսման մեջ կատարելագործվելու և հոգևոր աստիճաններ ստանալու համար: Տաթևում էին համախմբվել երկրի ուսյալ ու գործիմաց մարդիկ, գիտության, արվեստների և արհեստների տարբեր ներկայացուցիչներ: Դպրոցում նշանակալից տեղ էր հատկացվում ինչպես դասական գիտություններին, այնպես էլ հին հունական և հռոմեական հռետորական դպրոցի փիլիսոփայական ուսմունքներին: Հիշատակության արժանի է այն փաստը, որ իր հիմնադրման առաջին իսկ օրից, հունական փիլիսոփայական ուսմունքներն անարգելք, սակայն քննադատական և խիստ ընտրողական սկզբունքով, մուտքագրվել են Սյունյաց դպրոց: Այդ մասին հայ միջնադարյան դպրոցի և մանկա-

1 **Օրբելյան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 312:

վարժության պատմության տեսաբան Աբգար Մովսիսյանը գրում է. «Սյունյաց դպրոցը իր կապերը չխզեց հունական դպրոցի հետ, ինչպես այդ արեցին հայոց մի շարք դպրոցներ 6-րդ դարից սկսած, թեև Սյունյաց դպրոցը միշտ պայքարել է անօգուտ և օտարների կողմից բռնի կերպով ներս խցկվող ազդեցությունների դեմ: Նրա ներկայացուցիչները, նոր գիտություններին ընդառաջելով, ստրկամտորեն չէին խոնարհվում դրսից եկած ամեն մի ազդեցության առաջ»[1]: Սյունեցիներն անթաքույց հպարտությամբ հայտարարում էին, որ Տաթևի կոչումն է գիտություններ և արվեստներ տալ ամենքին, որովհետև այնտեղ գիտություններն ու արվեստները մշակվում էին ճշմարտությամբ և պահպանվում էին «անապական և անխառնուրդ»[2]:

Սյունյաց դպրոցը հայ իրականության մեջ, Շիրակացու դպրոցից հետո, առաջինն էր, որ համակարգված և հիմնավոր ուսուցանել է մաթեմատիկական և բնական գիտություններ, մասնավորապես մաթեմատիկա, աստղաբաշխություն, երկրաչափություն, թվաբանություն, տարրաբանություն և մարդակազմություն. այդ նույն ավանդույթը շարունակեց Տաթևի դպրոցը[3], որտեղ տարբեր ժամանակներում ճշգրիտ գիտությունների հետ մեկտեղ դասավանդվել են նաև հայագիտական առարկաներ, ստեղծվել և մշակվել են այդ առարկաների համար բազմաթիվ դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Տաթևի դպրոցում բարձր մակարդակի վրա էր դրված նաև գիտությանտարբեր ոլորտների գծով մասնագետներ պատրաստելու աշխատանքները: Դպրոցի երևելի սաներից շատերը թողել են արժեքավոր վկայություններ դասավանդվող առարկաների և այն մասնագիտությունների վերաբերյալ, որոնք պատրաստվում և ձևավորվում էին այնտեղ: Կան տեղեկություններ նույնպես այն մասին, որ դպրոցը պատրաստել է փիլիսոփաներ, երաժիշտներ, քանդակագործներ, նկարիչներ, մանրանկարիչներ, քերականագետներ, թվաբաններ ու երկրաչափներ, բնախույզներ ու տարրաբաններ, ուսուցիչներ ու գիտնական վարդապետներ, գրչության արվեստի վարպետներ, թուղթ ու մագաղաթ կոկողներ, մելան, թանաք պատրաստողներ, շնորհալի կազմարարներ և այլն:

Տաթևում տարբեր գիտությունների և արվեստների զարգացման հետ միասին առաջընթաց զարգացում ապրեց նաև մատենագիտությունը, պատմագիտությունն ու թարգմանական արվեստը: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ հայ միջնադարյան դպրոցներից Տաթևի դպրոցն առաջինն էր, որ հակադարձվելով միջնադարյան դպրոցի կարծրատիպ սովորույթներին ու նրա սահմանած խստակարգին՝ լայն հնարավորություններ ստեղծեց ինչպես աշխարհիկ, այնպես էլ բնական և ճշգրիտ գիտությունների զարգացման համար, մի բան, որ 11-րդ դարում նրանից օրինակ պիտի վերցներ Հովհաննես Սարկավագի Անիի իմաստասիրական բարձրագույն դպրոցը, որպեսզի «...զլավն ու պիտանիս յուր կրթարան մղեր»[4]:

1 **Մովսիսյան Ա. Խ.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10-15 դարեր), Երևան, 1958, էջ 98:

2 **Օրբելյան Ստ.**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 227:

3 Սյունյաց վարդապետարանը հիմնադրվել է 5-րդ դարի առաջին կեսին Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքում: Շաղատը Սյունյաց տեր Բաբիկի հրամանով դառնում է Սյունյաց աշխարհի հոգևոր և վարչական կենտրոնը: Սկսած 9-րդ դարի վերջերից՝ Սյունյաց նահանգի կենտրոնը դարձավ Տաթևը, որտեղ 895 թվականին կառուցվեց Տաթևի հոյաշեն եկեղեցին՝ իր համալիր շինություններով և դպրոցով:

4 Հայագիր դպրոցի ծագումը, Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր 8-րդ, էջ 413:

Տաթևի դպրոցը[1] 9-րդ դարի վերջերից սկսեց վերելք ապրել:Ձեռք բերելով մեծ հռչակ և հեղինակություն՝ այն դարձավ Հայոց աշխարհի բարձր կրթության և գիտության զարգացման խոշոր կենտրոններից մեկը: Սակայն Տաթևի դպրոցը, ինչպես միջնադարի շատ դպրոցներ, նույնպես չկարողացավ մշտապես պահպանել իր ազդեցիկ դիրքն ու բարձրությունը՝ կապված երկրի սոցիալ-քաղաքական հարափոփոխ իրադրության և պայմանների հետ: 12-րդ դարի վերջերին աստիճանաբար հանգչելով՝ այն այլևս չուներ իր երբեմնի շքեղությունն ու փայլը:

Բայց և այնպես, 13-րդ դարի վերջերին Տաթևը վերստին կենդանացավ ու ծաղկեց, իսկ 14-րդ դարի կեսերից ավելի մեծ անուն և հռչակ ձեռք բերեց՝ հանձինս Հովհան Որոտնեցու, որը կարճ ժամանակամիջոցում ընդարձակեց Տաթևի գործունեության շրջանակները՝ այն դարձնելով մայր դպրոց Սյունյաց աշխարհում: Որոտնեցու ժամանակ Տաթևը դարձավ հիմնովին բարձր տիպի դպրոց՝ դպրոցական իր համալիր հաստատություններով, մատենադարանով, գրչության կենտրոնով, երգիչ-երաժիշտներով, նկարիչներով, բազմահմուտ արհեստագործ-արհեստավորներով: Տաթևի դպրոցն առանձնանում էր նաև դասավանդվող առարկաների բազմաձևությամբ և այդ առարկաները դասավանդող ժամանակի ուսյալ, փորձառու և շնորհաշատ ուսուցիչ-դպրապետերով: Տաթևն ուշագրավ էր նմանապես ուսուցման գործընթացի կազմակերպման նորաձևություններով ու մեթոդներով, դպրոցական կանոնադրությամբ, բանավոր ու գրավոր քննությունների կազմակերպման իր ինքնօրինակ համակարգով:

Հիշատակության արժանի է նաև այն, որ Սյունյաց բոլոր դպրոցների համար Տաթևի դպրոցը կենտրոնական վարժարանի դեր է կատարել, ինչպես նաև հետևելով Գլաձորի համալսարանի ավանդույթներին՝ մասնակցել է երկրի տնտեսական ու քաղաքական կյանքին, կրոնական ու մշակութային նախաձեռնություններին: Ինչպես Գլաձորի դպրոցը, Տաթևի դպրոցը նույնպես ունեցել է սովորողների մեծ քանակություն, եղել են ժամանակներ, երբ աշակերտների թիվն այստեղ հասել է 200-ի:

Տաթևի դպրոցն իր ծաղկման երրորդ շրջանում առավել մեծ թափով վերելք ապրեց, քանի որ այն հարստացավ Գլաձորի համալսարանի կրթասիրական ավանդույթներով ու փորձով, որը փոխանցվեց ինչպես Հովհան Որոտնեցու, այնպես էլ այն գլաձորականների, որոնք ժողովվել էին Տաթևում և համախմբվել ու միացել էին Որոտնեցուն[2]: Ուշագրավ է այն, որ Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Գլաձորի բարձրագույն դպրոցը անվանում էր «հիսուսական համալսարան», նույն ձևով Մատթեոս Ջուղայեցին Տաթևի բարձր դպրոցն անվանում էր Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցու անունով, իսկ դա վառ ապացույցն էր այն բանի, որ Տաթևի համալսարանը ստուգապես կառուցված էր Գլաձորի համալսարանի օրինակով ու փորձով. այն հաջորդաբար ու արժանահավատ շարունակեց Գլաձորի գործունեության ուղղությունը և կրթասիրական ավանդույթները,:

Եթե Որոտնեցու ժամանակ Տաթևի դպրոցն իսկապես դարձավ ժամանա-

---

1 Տաթևի դպրոցը հայ հին մատենագրության և տարբեր ժամանակների ձեռագրերի հիշատակարանների մեջ վկայակոչվել է տարբեր անվանումներով՝ վարդապետարան, լսարան, վարժարան, ուսումնարան, համալսարան և այլն:

2 Տե՛ս Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 7823:

կի առաջնակարգ դպրոցներից մեկն՝ իր դպրոցական հաստատություններով ու ժամանակակից դպրոցի համար անհրաժեշտ օժանդակ հաստատություններով, ապա Գրիգոր Տաթևացին էր, ով իրականում առավել չափով ծաղկեցրեց դարեր շարունակ իր գոյությունը պահպանող Տաթևի դպրոցը՝ 14-րդ դարի վերջերին այն հասցնելով միջնադարի համալսարանի բարձր աստիճանի:

Ավելի քան 20 տարի Գրիգոր Տաթևացին աշակերտել է Հովհան Որոտնեցուն, սովորել է նրանից և աշխատել նրա ձեռքի տակ, նրա հետ մեկնել է Երուսաղեմ և նրա կողմից ձեռնադրվել վարդապետ և դարձել նրա օգնականն ու անձնական քարտուղարը[3]: Տաթևացու ջանքերի շնորհիվ մեզ են հասել Որոտնեցու փիլիսոփայական, գրական և մատենագիտական հարուստ ժառանգությունը: Եվ բոլորովին պատահական չէր, որ Որոտնեցին նրան էր վստահել Տաթևի համալսարանի տնօրինությունը և ուսուցչապետի բարձրանիստ ամբիոնը:

Տաթևացու գիտական ու մանկավարժական գործունեությունը հիմնականում ընթացել է Տաթևում[4]: Նրա ուսումնառությունը, կյանքը, գործն ու աշխատանքը ամբողջապես կապված են Տաթևի դպրոցի հետ, այստեղից էլ հավանաբար ծագել է նրա Տաթևացի մականունը (ծնվել է Գուգարքի Թմկաբերդ քաղաք-ամրոցում): Տաթևում է նա գրել իր բազմահատոր աշխատությունները, Տաթևում էլ կնքել իր մահկանացուն՝ 1409 թվականի դեկտեմբերի 27-ին:

Տաթևի բարձրագույն դպրոցի ամենափայլուն շրջանը՝ Գրիգոր Տաթևացու ուսուցչապետությամբ, կարելի է համարել 1388-1409 թվականները, երբ այն ունեցել է համալսարանական կառուցվածք, մասնագիտական ճյուղավորումներ ու ֆակուլտետներ: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մեկում պահպանվել է շատ արժեքավոր տեղեկույթ Տաթևի համալսարանի ուսումնական բաժինների մասին, համաձայն որի՝ Տաթևն ունեցել է երեք լսարան-ուսումնարան (ֆակուլտետ-Շ.Ո.): Լսարաններից առաջինում սովորել են երաժշտություն, երկրորդում՝ մանրանկարչություն, երրորդում՝ բանասիրություն և մատենագրություն: Պահպանվել են նույնիսկ հիշատակագրեր և կարևոր վկայագրեր Տաթևի համալսարանի պատրաստած մասնագետների մասնագիտական կողմնորոշումների մասին, որոնք հիմնովին համապատասխանում են սույն ձեռագրում վկայակոչված «ուսումնարանների» կառուցվածքին ու պահանջներին[5]:

Իմացաբանական հայացքներով Տաթևացին սենսուալիստ էր: Իմացության ելակետը նա համարում էր զգայական ընկալումը:Նրա պատճառաբանությամբ իմացության «զգայական կողմը» էական նշանակություն ունի ճանաչողության համար: Զգայարաններն, ըստ նրա հայեցաբանության, միջնորդ օղակ են արտաքին աշխարհի և մարդկային գիտակցության միջև: Այսուհան-

3 Հիշատակության արժանի է այն փաստը, որ Որոտնեցու դպրոցը այլևայլ մասնագիտությունների հետ պատրաստել է նաև մասնագետ քատուղարներ, որոնք սոսկ գրագիրներ չէին, նրանց մեջ կային նաև գրչության արվեստի հմուտ և գիտակ մասնագետներ, որոնք միջնադարում գրել, ընդօրինակել և դարերի հեռուներից մեզ են փոխանցել բազմաբովանդակ արժեքավոր գրքեր:

4 Իր գործունեության սկզբնական շրջանում Որոտնեցու կարգադրությամբ Տաթևացին ավելի քան երկու տարի պաշտոնավարել է Երնջակի Ապրակունյաց դպրոցում՝ որպես վերատեսուչ և գլխավոր ուսուցիչ, որից հետո հիմնովին տեղափոխվել է Տաթև:

5 Տե՛ս Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 7812:

դերձ, ճանաչողությունը չի սահմանափակվում միայն զգայարաններով, քանզի զգայարանները չեն կարող տալ իրի ամբողջական, կատարյալ իմացություն: Տաթևացին կարևորում էր նաև բանականության դերը, քանի որ իրը, իրի էությունը ըմբռնվում է միայն բանականության՝ մտքի միջոցով, այսինքն՝ «Միտքը կաղ է առանց հոգու մասնակցության, և հոգին կույր է առանց մտքի»:[1]

Բնական երևույթների մասին նրա մի շարք դատողություններ իրենց բնույթով ունեն մատերիալիստական ուղղվածություն: Բարձրաստիճան հոգևորական լինելով հանդերձ՝ այնուամենայնիվ, նա ընդունում էր օբյեկտիվ աշխարհի գոյությունը: Լինելով իմաստասեր-փիլիսոփա, աստվածաբան, բնագետ, բժշկապետ, երաժշտագետ ու նկարիչ՝ նա միաժամանակ նաև Տաթևի բարձրագույն դպրոցի փառաբանված ուսուցչապետն էր:

Տաթևացու իմացաբանական և փիլիսոփայական հայացքները սերտորեն առնչվում են նրա բնագիտական, մարդաբանական և մանկավարժական հայացքներին: Նա անվերապահորեն պաշտպանում և ընդունում էր փորձի միջոցով ձեռք բերվող գիտելիքի արժանահավատությունը: Երեխայի «ճանաչողական կարողությունը», նրա կարծիքով, դաստիարակության և ուսուցման շնորհիվ զարգանում է հետզհետե, հաջորդաբար և հետևողականորեն. այս գործում նա կարևորում էր ուսուցիչ-դաստիարակի դերը: Ուսուցիչը երեխայի մեջ պետք է սեր ներշնչի դեպի ուսումն ու գիտությունը և կամաց-կամացհարստացնի նրա «հոգևոր մաքրությունը»: Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկկից դեռևս երեք դար առաջ Տաթևացին գրում է. «Հոգին մարդոյն բանական որպես անգրել պնակիտ է, կամ լվացված մագաղաթ»[2], որի պարունակությունը օրըստօրե լրացվում, ամբողջանում է դաստիարակության, ուսման և բնության ուսումնասիրության միջոցով:

Տաթևացու պաշտած բարձրագույն արժեքը մարդն էր, որին բանականությունն ու հավատը դարձրել են արժանապատիվ և առաքինասեր: 14-րդ դարի միջնադարյան իրականության պայմաններում՝ որպես փիլիսոփա, բնագետ ու մարդաբան,նա բարձրացնում էր մարդու ծագման, նրա լինելության ու զարգացման հարցերը և փորձում էր դրանց տալ գիտական տրամաբանական լուծում: Ինչպես հետագայում վերածննդի դարաշրջանի հումանիստ մտածողները, Տաթևացին նույնպես մարդուն համարում էր բնության ամենակատարյալ ստեղծագործությունը՝ թագավորը. «...մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց, վասն որոյ ամենայն կենդանիք գլխիկոր են իբրև զծառայ և հնազանդ, և մարդն ուղղաձև՝ իբրև ազատ և թագավոր»[3]:

Մանկավարժական տեսանկյունից արժեքավոր են Տաթևացու այն մտքերը, որոնք վերաբերում են ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման, մատչելիության, զննականության և ուսուցման այլ սկզբունքներին: Ինչպես ուսումնական նյութը պետք է համապատասխանի երեխաների մտավոր ուժերին ու կարողություններին, այնպես էլ

1 **Արևշատյան Ս.**, Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը, Երևան, «Հայաստան» հրատ., 1980, էջ 70:

2 Նույն տեղում, էջ 48:

3 **Առաքելյան Ա.**, Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմությունից, Երևան, 1964, էջ 133:

առաջադրված դաստիարակության պահանջները պետք է համապատասխան լինեն նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր կարողություններին: Տաթևացու կարծիքով ուսուցումը պետք է սկսել վաղ տարիքից, քանի դեռ զգայարաններն ունեն առավելագույն ընկալունակություն, իսկ «հոգին չի ծանրացել հոգսերի, մեղքերի և անպիտան գիտելիքների բեռով»: Ուսուցման ընթացքում ուսուցիչը պարզ, դյուրին հարցերից աստիճանաբար պետք է բարձրանա դեպի բարդ, վերացական գաղափարները: Նա պահանջում էր մտավոր և բարոյական դաստիարակությունը կապել ֆիզիկական դաստիարակության հետ, որովհետև ինչպես ֆիզիկական դաստիարակությունն է նպաստում հոգևոր զարգացմանը, այնպես էլ առանց հոգևոր զարգացման «մարմնավորն ոչ գործէ...»[1]: Բացահայտ տեսանելի է, որ ինչպես հռոմեացի երգիծաբան Հոբնաղը[2], Տաթևացին նույնպես հանդես էր գալիս բոլոր ժամանակների համար արդիական «Առողջ մարմնում առողջ հոգի» գաղափարի ջերմ պաշտպանությամբ:

Գրիգոր Տաթևացին թողել է հարուստ մատենագիտական ժառանգություն (20-ից ավելի աշխատություններ), որոնց մեջ բացառիկ տեղ են գրավում դպրոցի և դաստիարակության հարցերին նվիրված՝ «Գիրք հարցմանց», «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ», «Գիրք քարոզության», «Սահմանադրություն դաստիարակության նորածնեալ մանկանց» աշխատությունները: Նրա «Սահմանադրություն դաստիարակության նորածնեալ մանկանց»[3] կանոնադրական աշխատությունը 14-րդ դարի հայ մանկավարժական գրականության մեծարժեք հուշարձաններից մեկն է: Այդ գրքում առավել հստակությամբ է ուրվագծվում Տաթևացու ինչպես փիլիսոփայական, այնպես էլ իմացաբանական, մարդաբանական և մանկավարժական հայացքների գաղափարական դիրքորոշումը: Նա առաջադրում է իր ժամանակաշրջանին վերաբերող խնդրահարույց շատ հարցեր և փորձում է դրանք լուծել դաստիարակության միջոցով:

Միջնադարի իմաստասեր փիլիսոփան ծնողներին և դաստիարակներին հորդորում էր վաղ տարիքից մանուկների մեջ դաստիարակել բարոյական դրական գծեր, պայքարել վատ հատկությունների, հոռի և նեգատիվ երևույթների դեմ: Նա պահանջում էր պարսավանքի ենթարկել ծույլերին, աշխատանքից խուսափողներին, նրանց «գործի լծել», պահանջների մեջ լինել հետևողական, սաստել, հանդիմանել այնքան ժամանակ, քանի դեռ ծնողը, կամ դաստիարակը չի համոզվել, որ նրանք իրականում ուղղվել են: Գրքում դատապարտելի և նողկալի են համարվում զազրախոսները, ստախոսները, խոսք տանող բերողներն («զի մի լիցի լրաբեր») ու գողերը, որոնք, նրա կարծիքով, պետք է ենթարկվեն ոչ միայն անարգանքի, հանրային պարսավանքի, այլ նաև պատժի:

Հումանիստ մանկավարժը պահանջում էր ամեն կերպ խուսափել պատիժներից, բայց միաժամանակ պատվիրում էր, երբ հարկ է պատժել, ուրեմն լինել հետևողական և արդարամիտ, չդրսևորել ո՛չ ավելորդ բարեհոգություն, ո՛չ էլ չափից ավելի խստություն, գիտակցել, որ պատիժը նույնպես ունի իր չափը՝ ո՛չ անհարկի ներողամտություն, ո՛չ էլ անչափ խստություն: Ծնողներն ու

1 **Գր. Տաթևացի**, Գիրք քարոզութեան, Ամարաս հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 115:

2 **Դեցիմուս Յունիուս Յուվենալիս** (60-130 թթ.) հռոմեացի բանաստեղծ, երգիծաբան: Հայ դասական գրականության մեջ հայտնի է Հոբնաղ անունով: Նրան է վերագրվում «Առողջ մարմնում առողջ հոգի» փիլիսոփայական ասույթը:

3 Այս աշխատությունը Տաթևացին գրել է բազմաթիվ գրքերի հեղինակ, միջնադարի հայտնի մատենագիր Առաքել Սյունեցու հետ միասին:

դաստիարակները երեխաների մեջ պետք է սերմանեն հավատ և բարեպաշտություն, հաղորդեն նրանց գիտելիքներ, վաղ տարիքից նրանց վարժեցնեն գյուղատնտեսության և արհեստների մեջ, որպեսզի հետագայում նրանք աշխատեն, նյութապես լինեն ապահով և չդիմեն գողության, քանի որ գողությունը չաշխատելու հետևանք է: Հետամուտ լինել, որպեսզի երեխան չդառնա շատախոս և դատարկախոս, իսկ ամենակարևորը չլինի ստախոս:

«Սահմանադրություն դաստիարակության նորածնեալ մանկանց» գրքի առանձին կանոններում Տաթևացին խարազանում էր բանսարկությունը, քսությունը, զազրախոսությունը, շատախոսությունն ու թափառաշրջիկությունը: Այսպես, օրինակ, գրքի 8-րդ կանոնի մեջ նա պատվիրում էր. «զի մի լիցի շատախոս և շատաշրջիկ»: Չարն ու չարիքը նա համարում էր դժբախտություն, իսկ դրանց իրավական ու բարոյական հետևանքը՝ աղետ ու կործանում:

Միջնադարյան շատ մանկավարժներից Տաթևացին առանձնանում էր նրանով, որ նրա հայացքներում ակնհայտորեն գործում էր տեսական ու գործնական գիտելիքների կապի սկզբունքը: Ինչպես գիտելիքները, այնպես էլ դաստիարակության իր մշակած կանոնները նա ուսուցանում էր ոչ միայն «բանիվ իմացում», այլ նաև «գործով կատարյալ», այսինքն՝ ոչ միայն խոսքով ընդունելի, այլ նաև գործնականում կիրառելի: Իբրև միջնադարի մեծ փիլիսոփա և առաջադեմ մտածող՝ Տաթևացին մարդու զարգացման գործում ընդունում էր դաստիարակության առաջնակարգ դերը: Նա ճշմարտացիորեն պատճառաբանում էր, որ մարդը պատրաստի առաքինություններով չի ծնվում, նա ձևավորվում է իր ապրած միջավայրում, ուրեմն դաստիարակությունը հաշվի պիտի առնի այդ միջավայրի ազդեցությունները և համաձայն դրա՝ կազմակերպի դաստիարակության գործը:Բացահայտ երևում է, որ Տաթևացին մերժում էր բնածին գաղափարների տեսությունը: Մարդուն համարելով ակտիվ ստեղծագործող էակ՝ նա բացառում էր նմանապես մարդու վերաբերյալ միջնադարյան ֆատալիստական տեսությունները: Մարդու զարգացման գործում նա պաշտպանում էր, այսօր էլ ընդունելի այն տեսակետը, որ մարդն ունի ժառանգական (բնական) և ձեռքբերովի (շնորհական) հատկանիշներ, որոնք հնարավոր է զարգացնել դաստիարակության միջոցով:

Մարդու զարգացման վերաբերյալ Տաթևացու առաջադրած դատողությունները բացարձակապես նորություն էին միջնադարյան դաստիարակագիտության մտքի պատմության մեջ: Նրա հայացքներում առկա են դաստիարակության առաջադեմ սկզբունքներ, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման արդյունավետ ձևեր ու մեթոդներ, որոնք ուշագրավ են ինչպես իրենց ինքնատիպությամբ, այնպես էլ մնայուն և հաստատուն արժեքներով: Թերևս դա է պատճառը, որ դրանք դարեր շարունակ պահպանվել են դաստիարակության մեջ, մեր կենցաղում և չեն կորցրել իրենց նշանակությունն ու հրատապությունը նաև այսօր:

Ժամանակակիցների վկայությամբ՝ Գրիգոր Տաթևացին կրթել ու դաստիարակել է երեք հարյուրից ավելի աշակերտներ: Նրանցից շատերը դարձել են ականավոր պատմաբաններ, փիլիսոփաներ, նկարիչներ, մատենագետներ, եկեղեցական բարձրաստիճան գործիչներ. այդ շարքում հիշատակության են արժանի Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Մատթեոս Ջուղայեցին, Առա-

քել Բաղիշեցին, Գրիգոր Արարատեցին, Բարսեղ Բաղիշեցին և շատ ուրիշներ[1], որոնք հսկայական դեր են խաղացել հայ հասարակական կյանքում, գիտության և մշակույթի ասպարեզներում:

Հայոց միջնադարյան մատենագրությունը լեցուն է Տաթևացուն փառաբանող գովեստներով ու հիշատակություններով: Առանց չափազանցնելու ժամանակակիցները նրան փառաբանել են որպես մեծ մարդու, հասարակական և եկեղեցական բարձրաստիճան գործչի, իր ժամանակի հանրագիտակ գիտնականի, դպրոցագետի և բարձրագույն կրթության փայլուն կազմակերպչի: Նա մեծարվել ու փառակերտվել է նաև՝ «Դաստիարակ ամենայն հայոց» բացառիկ տիտղոսով:

Ինչպես Գրիգոր Տաթևացին, այնպես էլ միջնադարի հայոց երևելի մտածողներն իրենց սրբագործված կյանքով ու գործով, դպրոցավարական ու մանկավարժական իրենց գործունեությամբ և արժեքային կողմնորոշումներով ազգային անանցողիկ մեծություններ են՝ հավերժ ընդօրինակման ու մեծարման: Նրանց կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը կենդանի օրինակ է այսօրվա և գալիք սերունդների համար:

ТАТЕВСКАЯ ШКОЛА И ЕЁ НЕУТОМИМЫЙ ТРУЖЕНИК - ШОГИК ВОСКАНЯН, ВЛАДИМИР КАРАПЕТЯН, ЗАБЕЛЛА ЗОГРАБЯН - Татевская школа сыграла важную роль в истории и становлении армянской школы. Не смотря на тот факт, что это была не первая высшая школа Средневековья, однако она была одной из первых, которая имела структуру университета, отделения и факультеты по специальностям. В конце XIII века, после опустошительных нашествий турок и татар, Татев был реконструирован. Настает эпоха расцвета, а с середины XIV века школа приобретает известность, особенно в период правления Иоанна Воротенци, а затем его талантливейшего ученика Григора Татеваци.

Ключевые слова: средневековая школа, духовный центр, центр переписывания древних рукописей, философское учение, классические науки, духовный сан, средневековая Армения, комплексные здания, высокопоставленное духовенство.

THE TIRELESS CULTIVATOR OF THE SCHOOL OF TATEV - SHOGHIK VOSKANYAN, VLADIMIR KARAPETYAN, ZABELLA ZOHRABYAN - The School of Tatev has played an incomparable big role in the history of the Armenian school. Athough it wat not the first higher educational school in the Middle Ages, it was the first that had university structure, fields of professions and faculties. At the end of the 13th century, after the Turkish and Tatar devastating invasions, the School of Tatev was reconstructed and flourished and starting from the middle of the 14th century it acquired a great name and popularity, especially when it was headed by Hovnan Vorotnetsi, an after by his talented student Grigor Tatevatsi.

Key words: Medieval school, spiritual center, center of literacy, philosophical doctrine, classical sciences, spiritual degree, Medieval Armenia, complex buildings, high-ranking clergymen.

1 Նրանցից 60-ի անունները ներառված են Հրաչյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ում: